ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի իրավագիտության
001 մասնագիտական խորհրդին
պաշտոնական ընդդիմախոս, իրավ. գիտ.
դոկտոր, պրոֆեսոր Ս.Ս. Ավետիսյանից

ԿԱՐԾԻՔ

Վիրաբ Ռուբիկի Համբարձումյանի **«Զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական հիմնախնդիրները»** վերտառությամբ ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Զենքի ապօրինի շրջանառությունը ժամանակակից հասարակությունների առջև ծառացած քրեածին երևույթներից մեկն է, որն անմիջական ազդեցություն է ունենում հասարակական անվտանգության ապահովման վրա: Ապօրինի շրջանառության մեջ գտնվող զենքերը հաճախ օգտագործվում են ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների, այդ թվում՝ սպանությունների, ավազակությունների, ահաբեկչության, կազմակերպված հանցավորության և այլ բռնի հանցագործությունների կատարման նպատակով:

Հարկ է նշել նաև, որ միջազգային և տարածաշրջանային անվտանգության մարտահրավերների՝ զինված հակամարտությունների, միգրացիոն գործընթացների, սահմանների թափանցելիության և հանցավոր խմբավորումների գործունեության ակտիվացման պայմաններում աճում են զենքի ապօրինի շրջանառության ռիսկերը: Այս հանգամանքները պետություններից պահանջում են մշակել և ներդնել առավել արդյունավետ գործիքակազմեր զենքի ապօրինի շրջանառության դեմ պայքարի ուղղությամբ:

Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ զենքի ապօրինի շրջանառության դեմ արդյունավետ պայքարի երաշխիքներից է նաև քրեական օրենսդրությունը: Այս

ոլորտում հասարակական հարաբերությունների զարգացմանը համահունչ հստակ և առաջադեմ իրավակարգավորումները, արարքների ճիշտ և հիմնավորված որակումները, արդարացի պատիժները, քրեական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործումը կարող են երաշխավորել անձանց, կազմակերպությունների, պետության և հասարակության անվտանգությունը, նպաստել զենքի ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետությանը:

Վերոհիշյալ հանգամանքներն, անկասկած, վկայում են Վիրաբ Համբարձումյանի ընտրած թեմայի արդիականության, դրա շրջանակներում նրա կողմից իրականացված հետազոտության անհրաժեշտության և հրատապության մասին: Բացի դրանից, ատենախոսական քննարկվող հետազոտության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունում գործողության մեջ է դրվել «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքը, որով զգալիորեն մեղմացվել են քաղաքացիական զենքի ձեռքբերման և տիրապետման կանոնները: Այս հանգամանքով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել մարդու հիմնարար իրավունքների երաշխավորման լույսի ներքո գնահատել նաև նոր իրավակարգավորումները:

Այդ համատեքստում պետք է նշել, որ հեղինակին հաջողվել է պատշաճ մակարդակով բազմակողմանի և համալիր վերլուծության ենթարկել զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական արգելքը պայմանավորող նախադրյալները, ինչպես նաև զենքի օրինական շրջանառության ազատականացման բացասական և դրական կողմերը: Միևնույն ժամանակ, հեղինակը համակողմանի հետազոտման է ենթարկել քաղաքացիական զենքի շրջանառության միջազգային ստանդարտները՝ դրանց լույսի ներքո գնահատելով նաև քաղաքացիական զենքի շրջանառության ներպետական կանոնակարգերը:

Բացի այդ, հեղինակը կատարել է զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի, այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն սահմանող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 334-339-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի քրեաիրավական վերլուծություն, ինչպես նաև ուսումնասիրել է ապօրինի

շրջանառության մեջ գտնվող զենքի հանձնումը խրախուսող նորմերի քրեաիրավական հիմնահարցերը:

Ընդ որում, այդ կապակցությամբ հեղինակի եզրահանգումներն ու առաջարկություններն առանձնանում են ինքնուրույնությամբ և տեսական հիմնավորվածությամբ: Մասնավորապես, առանձին ուշադրության են արժանի ատենախոսի հետևյալ դատողությունները.

1) Անհրաժեշտ է բացառել զենքի թույլտվությունների տրամադրումը երկու կամ ավելի անգամ (պարբերաբար) բռնությամբ զուգորդված ոչ մեծ և (կամ) միջին ծանրության հանցանքներ կատարած անձին՝ անկախ այդ անձի դատվածությունը վերացված կամ մարված լինելու հանգամանքից: Անձի կողմից նախկինում երկու կամ ավելի անգամ (պարբերաբար) բռնությամբ զուգորդված հանցանքներ կատարած լինելու հանգամանքը վկայում է տվյալ անձի՝ նորմայից շեղվող, հակասոցիալական վարքագծի և բռնություն գործադրելու հակումների մասին: Այդ անձի մոտ զենքի առկայությունը կարող է արդիականացնել ագրեսիվ պահանջմունքները՝ վերջինիս մղելով բռնությամբ զուգորդված նոր հանցանք կատարելու, որը հղի է անդառնալի հետևանքներով հնարավոր զոհի համար (տե՛ս Ատենախոսության էջ 48-ը):

2) Ողորկափող հրազենը որպես «քաղաքացիական» դասակարգելու համար այն պետք է ունենա գործարանային ծագում և ենթարկված չլինի կառուցվածքային այնպիսի փոփոխությունների, որոնց հետևանքով տվյալ հրազենը կորցրել է իր նախնական (գործարանային) նշանակությունը՝ խաթարվել են դրան ներկայացվող քրեագիտական պահանջները, փոխվել են մարտավարատեխնիկական հատկությունները (տե՛ս Ատենախոսության էջեր 70-71-ը):

3) Համապատասխան ստանդարտներում սառը զենքի համար սահմանված կառուցվածքային տարբերակիչ հատկանիշները հնացած են և արհեստական՝ զենքերը կենցաղային նշանակության կամ հանրորեն վտանգավոր այլ առարկաներից տարբերակելու համար: Անձի կյանքի և առողջության համար սպառնալիքի տեսանկյունից դրանք էական նշանակություն չունեն, և որևէ քրեագիտական չափանիշ ինքնին չի կարող որոշել առարկայի իրական հանրային վտանգավորությունը (տե՛ս Ատենախոսության էջ 82-ը):

4) «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում ամրագրված «զենք կրել», «զենք պահել» և «զենք տեղափոխել» հասկացությունների բովանդակությունը չի կարող անտեսվել ՀՀ քրեական օրենսգրքում զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերի օբյեկտիվ կողմի դրսևորումները մեկնաբանելիս: Այլ կերպ՝ զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերի օբյեկտիվ կողմի դրսևորումների բովանդակությունը չի կարող բացահայտվել հիշյալ հասկացությունների բովանդակությունից տարանջատված, և դրանք անհրաժեշտ է դիտարկել նշված դրույթների հետ համակցության մեջ (տե՛ս Ատենախոսության էջ 107-ը):

5) Գործող քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված իրավանորմի բովանդակային ձևակերպումը դժվար է համարել հաջողված, քանի որ դրա գործնական կիրառման ընթացքում իրավապահ մարմինները հաճախ կարող են հայտնվել քննարկվող խրախուսական նորմի կիրառման վերաբերյալ նախկինում ձևավորված պրակտիկային տրամաբանորեն հակառակ ծայրահեղության մեջ (տե՛ս Ատենախոսության էջ 143-ը):

Հարկ է նշել նաև, որ գրախոսման ներկայացված ատենախոսության կառուցվածքը տրամաբանական է՝ դրանում քննարկվող հիմնախնդիրների բովանդակությամբ պայմանավորված: Այսպես, աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական հիմնախնդիրներին վերաբերող ութ պարագրաֆ, եզրակացությունից, օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկից: Ընդ որում, հեղինակի օգտագործած գրականության ցանկը վկայում է հետազոտության ընթացքում նրա կողմից բավականին հարուստ տեսական և նորմատիվ բազայից օգտվելու մասին:

Միևնույն ժամանակ, քննարկվող ատենախոսությունը, ինչպես և գիտահետազոտական աշխատանքի ցանկացած արդյունք, զերծ չէ որոշ վիճելի մոտեցումներից, դիտարկումներից, կարծիքներից, առաջարկություններից, որոնց կապակցությամբ առկա են ընդհանուր առմամբ հետևյալ **նկատառումները**.

1. Վիճելի է հեղինակի դիրքորոշումն առ այն, որ զենքի շրջանառության ազատականացումը (լիբերալացումը) իր բացասական դրսևորումներով հանդերձ արդարացված է (տե՛ս պաշտպանության ներկայացվող դրույթ 1-ը): Այս համատեքստում հարկ է նշել, որ բազմաթիվ կրիմինոլոգիական հետազոտություններ հիմնավորել են կապը, որը գոյություն ունի հրազենի տարածվածության և հանցավորության մակարդակի միջև: Ըստ էության, այդ հետազոտություններում ընդգծվում է փոխադարձ կապը, որը գոյություն ունի բնակչության մոտ հրազենի առկայության և բռնի հանցագործությունների քանակական ցուցանիշների միջև: Բացի այդ, զենքի տիրապետման լայն տարածումը կարող է հանգեցնել տարբեր տեսակի ռիսկերի աճի, այդ թվում՝ զենքի հետ անփութորեն վարվելու հետևանքով առաջացող մահերի թվաքանակի ավելացման և զգալի տնտեսական վնասների առաջացման:

2. Հեղինակն առաջարկել է թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո, առանց սահմանված կարգով դրանք երկարաձգելու, զենք պահելու կամ կրելու (իրավաբանական անձի դեպքում՝ պահելու կամ օգտագործելու) դեպքում անձի արարքը որակել զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հանցակազմերով (տե՛ս պաշտպանության ներկայացվող դրույթ 8-ը): Ընդ որում, արտասահմանյան երկրների ոլորտին վերաբերելի իրավակարգավորումների ուսումնասիրության արդյունքում հեղինակն արձանագրել է, որ քննարկվող իրավիճակում անձի արարքի որակման (իրավական հետևանքների առաջացման) հարցում պետությունների մոտեցումները միասնական չեն, և մի շարք երկրներում թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո զենքը պահելը կամ կրելը (օգտագործելը) որակվում է որպես վարչական իրավախախտում: Այս առումով հարց է առաջնում՝ արդյոք թույլտվությունների ժամկետները լրանալուց հետո, առանց սահմանված կարգով դրանք երկարաձգելու, զենք պահելը կամ կրելը (իրավաբանական անձի դեպքում՝ պահելը կամ օգտագործելը) բնութագրվում են հանրային վտանգավորության այնպիսի աստիճանով, որը կարող է արդարացնել անձի նկատմամբ քրեական պատասխանատվության կիրառումը և արդյոք քննարկվող դեպքում վարչական պատասխանատվության միջոցների կիրառումը չի

կարող ապահովել իրավական կարգավորման անհրաժեշտ արդյունավետությունը՝ առանց քրեական իրավունքի խիստ ներգործության միջոցներին դիմելու:

3. Հեղինակն առաջարկել է քրեականացնել հանրային վայրում դանակ կամ հանրավտանգ այլ առարկաներ կրելը (տե՛ս աշխատանքի 188-189-րդ էջեր): Հեղինակի կարծիքով՝ անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության մի շարք դեպքերում, այդ թվում այն դեպքում, երբ առարկաներն իր մոտ պահելու իրավաչափ նպատակ է ունեցել: Գտնում ենք, որ իրավական որոշակիության տեսանկյունից տվյալ ձևակերպումն անորոշ է և իրավակիրառ պրակտիկայում կարող է խնդիրներ առաջացնել:

Վերոհիշյալ նկատառումները, սակայն, էապես չեն ազդում աշխատանքի ընդհանուր որակի, տեսական և, հատկապես՝ գործնական նշանակության վրա, այլ պարունակում են դատողություններ, հարցադրումներ, որոնց պարզաբանումը կարող է առավել բարձրացնել դրա արժեքավորությունը:

Ինչ վերաբերում է աշխատանքի սեղմագրին, ապա այն ամբողջովին համապատասխանում է ներկայացվող պահանջներին և ատենախոսության բովանդակությանը:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ քննարկվող ատենախոսությունը հավաստի և արժանահավատ, գիտականորեն հիմնավորված ու փաստարկված հետազոտության արդյունք է, որն ապահովվել է արդի իրավագիտության մեթոդաբանության կիրառմամբ, հարուստ տեսական գրականության, նորմատիվ աղբյուրների և փորձառնական տվյալների լայն օգտագործմամբ:

Եզրակացություն.

Վերոգրյալի հիման վրա կարելի է եզրակացնել, որ Վիրաբ Ռուբիկի Համբարձումյանի **«Զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական հիմնախնդիրները»** վերտառությամբ ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ Կառավարության 08.08.1997թ. թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կանոնակարգի» 7-րդ կետի

պահանջներին: Այսինքն՝ տվյալ ատենախոսությունը գնահատվում է իբրև գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում: Հետևաբար, ատենախոսն արժանի է իր կողմից հայցվող գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս՝
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան Սերժիկ Սերգեյի Ավետիսյան

22.06.2026թ.

Ս.Ս. Ավետիսյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Ռուս-Հայկական համալսարանի գիտ.քարտուղար
բ.գ.թ. Ռոզան Սերգեյի Կասաբաբովա